44. ՍԱՏԱՖ ԽԱՆՈՒՄ

Կէղնին, չէղնին էրկու ախպեր կէղնին, մեկին կէղնի յոթ տղա, մեկին լե՝ յոթ ախչիկ։

Յոթ ախչկա տեր լուսմութ շուտ կէլնի կէրթա շուկեն, կբանա զուր դուքյանն ու կնստի։

Էն յոթ տղետեր ախպեր լե կէլնի կէրթա բարև կիտա. «Բարև քզիկ, ետի բոնճուխ սրհապի»։ Այսինքն կասե՝ ես յոթ տղա ունեմ, դու յոթ ախչիկ։

Ինչխրտար լուսուն օր էդ մարդ կէլնի կէրթա, կբանա զուր դուքյան, էդ ախպերն է հ՚ըմնօր կիգա, բարև կիտա ու կասե՝ «Ետի բոնճուխ սրհապի» ու կընցնի էրթա։

Էդ մարդուն կէղնի դարդ, օր ախպեր կիգա էդ հըմալ կասե ու կէրթա։

Օր մը լե զնյաթ կէնե, կէլնի կէրթա տուն, պզտիկ ախչիկն կտեսնա, օր հոր նյաթ կախուկ է, կասե.—Աբո, զքու նյաթ հ՚որի՞ն իս կախի։

Հերն կասե.— Հ՚ըմնօր լուսուն ինչ խտար կէրթամ բանամ զդուքյան, քու հողբեր կիգա, կասե՝ «Բարև քի, ետի բոնճուխ սրհապի» ու կընցնի էրթա. ընծիկ էղեր է ցավ։

Պզտիկ ախչիկ՝ խելոք կէղնի, հոր կասե.— Հ՚էսօր դու հ՚անգան գնա շուկեն, էնի թըղ էրթա, զուր դուքյան բանա, դու սորա գնա։

Հեր զախչկա խոսք կբռնե, հ՚առջին հեզ կելնի յոթ տղի տեր ախպեր կէրթա, կբանա զուր դուքյան, ինք սորա կէրթա։ Օր կէրթա զդուքյան բանա, ախչիկ կսորվեցու, կասե.— Ըստ հաղ դու գնա բարև տուր, ասա՝ «Բարև քզիկ, ետի քյոփակ սրհապի»։

Կելնի կէրթա, կտեսնա օր ախպեր բացեր է զդուքյան, նստի։ Կասե.—Բարև քզիկ, ետի քյոփակ սրհապի։

Ու կընցնի կէրթա։

Հ՝իրկուն կդառնա կիգա տուն։ Ախչիկ կտեսնա, օր հեր մեկ լե հ՝ընկեր է մտածման մեջ։ Կասե.—Հերիկ, դու հ՝ո՞րի կմտածիս, ես ու էնդոր մեծ տղեն կէրթանք թուճրուսթենի։

Հեր կասե.— Կէրթաք, գացեք։

Կէլնի, ախչկան ձեռքըմ մարգանակ հալավ կկտրե, կիտա ուրեն բոլամա խարճլըխ։ Կելնին կէրթան։

Կելնին կէրթան, խոսքի համար ասիմ, կհասնեն հար Արզրում։ Ախչիկ զտղեն կթողե զԱրզրում, կասե.—Դու մանցի հ՝ոդա, ալիշ-վերիշ էրե, ես կընցնիմ էրթամ։

Ախչիկ հոկուց կքշե, ասիմ կիգա, կիգա կհասնի Վան, ուրեն դուքյան մը կբանա, կնստի, առուտուր կէնե։

Ախչկա հետ պզտիկ բոշի մը կեր, ուր հետն էր տարի։

Ախչիկն ուր առուտուրի հետ կէղնի։ Քզիկ օր ասիմ, քի պես ազապ տղե մը (օրինակ) կէրթա ախչկա դուքյան բան կառնե։ Տղեն օղորդ օր չգինա էդ ախչիկ է։ Սիրտ կընկնի հ՝ինք, կէղնին իրարու հետ ախբըրգիր։ Կդառնա կիգա տուն, մոր կպատմե.—Մերիկ, ես հ՝էսօր գացի դուքյան մը առուտուր կէնենք, ես տեսա օր էդ դուքնի մեջ ազապ տղե մը կէր, ուր սուրաթ մաներ ախչկա ու չմաներ, խըզրզի ալ յուզի, խոլի բըլագուկ երի*։

Տղեն է, օր մեկ-էրկու հեզ կէրթա-կիգա էդ ախչկա դուքյան, ախչիկ կհասկնա, օր տղի սիրտ հ՝ընկեր է հ՝ինք։

Ախչկա ֆինոն** շատ խելոք կէղնի, ինչ օր կէղնի կիմնա, կէրթա ախչկան կասե, թե՝ էդա տղի սիրտ հ՝ընկեր է քի։

Տղի մեր լե իմաստուն կէղնի, օր տղեն, հրմալ մարախ կէնե, կասե.— Լաո, մատամ օր մարախ կէնիս, ու շուֆալանմիշ իս, բի տավաթ, կողովըմ վարդ լից քու տակ, մեկ էնդոր ու նստեք վրեն։ Օր հ՝ելաբ հ՝առդրվանց, տեսար օր թոռմած է էնդոր տկու վարդ, գիտցիր օր ախչիկ է։

Շուն հ՝իմցավ օր, մամն էդ հրմալ էր ասի, գնաց ախչկան ասեց։

Տղեն գնաց ախչկան ասեց.—Վաղ դու իմ տավաթլուն իս։

Ախչիկ բանըմ չասեց։ Հ՝ելավ գնաց։ Օր հ՝ելավ գնաց, տղեն բերեց կողով մը վարդ, լցեց ուր տակ, մեկ՝ էնդոր։

Ախչիկ գիշեր զարթավ, չէ՞ շուն ուրեն ասեր էր։ Իշքեց օր ուր տկու

---

* Վիզ կարմիր ու սիվտակ, թենոցները բըլազուկի տեղ (Թ. Բ.)։

** Շունը (Ս. Բ.)։

վարդ թոռմիր է, կանչեց զբաղչապան, տվեց օսկի մը ձեռք, գնաց կողով մը թաժա վարդ բերեց, լցեց ուր տակ ու պառկավ քնավ։

Հ՚առտվանց հ՚ելան, տղեն տեսավ օր ախչկա տկու վարդ չուր թաժա է, մնաց մարախի մեջ։ Վազեց էկավ մոր մոտ ու ասեց.— Ախ, անա, ախ անա, խըզըղի ալ յուղի, խոլի բըլազուկ երի։

Ասաց.—Էդ ախչիկ է ու չընք կառնա հ՚իմնա։

Մերն ասեց.— Լաո, օր շատ մարախ կէնիս, ախբր դուք ախբրրգիր իք, լուսուն հ՚ելի, կանչե կերուխումի, սորա հ՚ելեք շարդ բռնեք հ՚իրարու հետ։ Ասա՝ ախբր մենք ախպեր ինք էդի հ՚իրարու, հ՚ելնիք շրջինք, տեսնանք ո՞ր զուր պոզ հեռուն կթալե։

Շուն հասկցավ, էկավ ախչկան ասեց.— Տղեն էսօր լե զբզիկ կերուխումի կկանչե ու մերն հրմլա է ասի։

Շուն օր էդ տեսակ ասեց, ախչիկ զուր թատարուկ տեսավ։ Հ՚ելավ առավ ճժու լուլե մը ուր հետ ու գնաց։ Գացին կերան, խմեցին ու հ՚ելան բախչի մեջ, օր օլրրտեն։ Տղեն բացեց, ախչիկ զաթի գիներ։

Ասեց—Արի կանիք շրջինք, զմբր ուժ չրռպենք, տեսնանք վիր շեռ կընցնի զվիր։

Կանան շռեցին։ Ախչիկ հանեց զլուլեն, դրեց վբր ուր ճբվտուկին ու զուր պոզ թալեց, զտղին հ՚ընցուց։ Տղեն մեկ լե մնաց էդ մարախի մեջ, հ՚ելավ թողեց էկավ ուր տուն։

Ախչիկ հասկցավ, օր տղեն հ՚ընկուկ է ուր հ՚ետևեն, ախբր զուր թարկ չի տա, ասեց. «Ջանըմ, էդի թագավորի մը տղա է, ես հասարակ մարդու մը ինչ կառնա՞մ հուն հ՚ելնիմ էդոր հետ, էդոր բարին էն է՝ բառնամ ղիմ բեռներ, հեռենամ էրթամ էդա քաղաքեն»։ Հ՚ելավ, բառցավ զուր բեռներ, ղբոճին դրեց հետ, ճամբեց։ Ինք լե վերշ պիտի հասներ բեռներուն, օր տղեն շրքի չընկնի։

Տղեն մեկ լե դառցավ էկավ մոր խեչ։ Ասեց.— Ախ անա, ախ անա, «խբզուզի ալ յուղի, խոլի բիլազուկ երիս», ախբր էդի ախչիկ է, ու մենք չընք կրռնա զուր նա օլդուղեն* հասկնա։

Մերն ասեց.— Լաո, մատամ օր շատ մարախ կէնիս, հ՚ելի առ գնա բաղնիք, տավաթ էրե։

Բոճին էրթալու վախտ ասեր էր.—Հանդե տղեն թատարուկ է, առնե զբզիկ էրթա բաղնեկ։

Ախչիկ զուր ձին ու մշակ հազրեր էր։ Տղեն էկավ կանչեց, ասեց.— Արի էրթանք բաղնեկ։

---

* Ով լինելը (Թ. Կ.)։

Ախչիկն ասեց.—Թող էղնի։

Հ՝ելան զիրար առան ու գացին բաղնեկ։

Տղեն ասեց.—Դը տկլոզցի, էրթանք ներս լոզկընանք։

Ախչիկն ասեց.— Դու գնա, ես լե կհանիմ զիմ հալավ, կիգամ։

Տղեն ակլոզցավ, մտավ բաղնիք։

Ախչիկ կհանե զուր մատնեկ, կդնե տղի հալվընեբու վրեն ու կելնի կիգա, կհեծնի զուր ձին ու կընկնի ճամբախ։

Տղեն ինչխրտար կկանչե, մատնեկ դրսեն կասե՝ հա, էկա, ու չի գա, հա էկա, ու չի գա։

Տղեն հար հ՝իրկուն կիշքե, կտեսնա, օր ախչիկ չէկավ, կէլնի ինք կիգա, օր առնե, էրթա։ Կիգա կտեսնա, օր ախչիկ չկա, մենակ մատնեկ դրուկ է վրը ուր շորերուն։ Կընցնի ուշք, կընկնի գետին։ Կբերեն ջուր կըլնան վրը հ՝երեսին, ուշք կբերեն հ՝ինք, կթողե, կէրթա ուր տուն։

Կէրթա ուր տուն, կասե.—Տեսա՞ք, քանի կասենք ձըզիկ՝ էդի ախչիկ է, չավդրցաք, հար ձեռքե մի թռավ։

Հողի կպատմե զուր գլուխ գալած մոր։

Տղեն թըղ մնա հ՝ոդի, մենք դառնանք վրը ախչկան։

Ախչիկ քշեց էկավ Արդրում, հ՝ելավ դուրս, տեսավ օր ուր հոզբոր տղեն թրքի կողով շալկեր է ու կիգա։ Կանչեց, ինք ճանչցավ զէնի, էնի չճանչցավ զինք։ Ասեց.—Դու էդա տեխ ի՞նչ կէնիս, ի՞նչ տեխեն իս։

Տղեն ասեց.— Ֆլան էրկրեն եմ, համլութեն կէնիմ հ՝ոդա։

Ախչիկն ասեց.— Ես կէրթամ ձըր էրկիր, թուճարի մը չը՞ս իգա էրթանք։

Տղեն ասեց.—Հ՝որի՞ չըմ իգա։

Հանեց, փարա տվեց ուրին, ասեց.— Գնա բաղնիք, լոզկըցի, ձեռքըմ հալավ առ քըզիկ, ես ֆլան տեխն իմ, էկո հիդրաց էրթանք։

Տղեն գնաց համամլամիշ էրեց զինք, ձեռքըմ հալավ հագավ ու էկավ։

Ախչիկն ասեց.— Զիս կճանչնա՞ս։

Տղեն ասեց՝ չէ։

Ախչիկն ասեց.—Քու հոզբոր ախչիկն իմ, օր հիդրաց էկանք գացինք թուճրութենի։

Բերեց տղին տվեց փարա, ասեց.—Գնա, քզիկ քառսուն բեռ ուրուճեկ բռնե ու էկո, էրթանք։

Տղեն գնաց բռնեց ու առան զիրար, հ՝ելան էկան։ Քշեցին գացին. էն զուր բեռներ թափեց ուր հոր ղուքնի դուռ, էն լե՝ զուր։ Ախչկա բեռներ հ՝ըմեն օսկի ու արծաթ էր, կրեցին թափին ներս։

Ախչիկն ասեց.— Աբո, գնա օգնա, քու ախբոր տղի բեռներ լե թափեք ներս։

Հերն հ'ելավ գնաց։ Օր գնաց, ախչիկն ասեց.— Աբո, կէրթաս, օր կթափիք ներս, ասե քու ախբոր. զմըր քառսուն բեռ ուրուճկի փարեն լե ճամբե իգա, զէդոր փարեն ես եմ տվի։

Հերն գնաց, ախբոր օգնեց, զքառսուն բեռ ուրուճկ օր թափին ներս խլըսան, ախբերն ասեց.—Իմ ախչիկ զուրուճկի փարեն կուղե։

Տղի հերն ասեց.— Ի՞նչ փարա է,— հարցուց տղից։

Տղեն ասեց.— Օղորդ է,— կասե,— զուրուճկի փարեն էն է տվի, ես փարա չունենք, էլ ամոթուց դարդակ չբերեց ուր հետ, բռնեց քառսուն բեռ ուրուճկ առավ, էկավ։

Յոթ տղի տեր ախբեր զքիթ կախեց, տվեց զփարեն, ախբերն առավ էկավ, տվեց ախչկան։

Հըմկա մենք դառնանք տղի վրեն։

Տղեն է, տեսավ օր ախչիկ ուր ձեռքեն թռավ, մամուն ասեց.—Ես պիտի հ'ելնամ պարկըմ բոնճուխ հ'ըլնամ, էրթամ ախչկա հ'ետևեն։

Մերն ինչ էրեց, չկառցավ վըր ուր տղեն։

Տղեն հ'ելավ, պարկըմ բոնճուխ լըցեց ու հ'ընկավ ճամբախ։ Քաղքե քաղաք, գեղե գեղ օլըրտելով, էկավ հասավ ախչկա քաղաք, հ'ելավ դուրս։

Ախչիկ նստուկ էր փանճարեն, տեսավ զտղեն։ Օր տեսավ, ճանչցավ. կանչեց, հանեց վի։ Ասեց.—Տղա, էդ ի՞նչ կծախիս։

Տղեն ասեց.—Բոնճուխ։

— Բի հ'ոդա տեսնամ։

Տղեն բերեց, ախչիկ վերցուց զտոպրակ ու լցեց գետին, շրջեց ու շրշմրշկցեց՝ էդա չէ, էդա է, էդա չէ, էդա է։

Տղեն պաղբերներ էր, կիշքեր ախչկա էրես, ինքն ուրեն կասեր. «Մանի էն ախչիկ.ու չմանի, մանի ու չմանի»։ Վել հասըլ հար հ'իրկուն զէդ պարկ մարգրիտ դարդկեց ու լցեց, հըմալ էրեց, օր տղեն էղավ քեթ։ Իմալ էղավ ախչկա աչք առավ ուր մատնեկ։ Ասեց.—Տղա՛, զէդա մատնեկ չիտա՞ս ընծիկ։

Տղեն ասեց.—Չըմ ծախի, էդոր տեր կա։

Ախչիկն ասեց.—Ի՞նչ կիտաս, օր զէդոր տեր ցուցում քզիկ։

Օր հըմալ ասեց, տղեն հասկցավ՝ էդի ուր մարդն է։ Ալենի էրեց թե. «Ես ֆլան մարդն իմ, էկեր եմ իմ նշանլուի հ'ետևեն»։ Ախչիկ լե ասեց, թե. «Ես լե էն թուճարն եմ»։ Խոսք տվին հ'իրարու, օր առնեն զիրար։ Տղեն հ'ելավ զուր բերած մարգրիտներ թողեց ախչկան ու նշանեց, գնաց օր զուր թատարուկ տեսնա, առնե զուր կնիկն, էրթա։

Տղեն հ'ելավ գնաց թարղու դուքան, օր կնկան հալավ իտեր կաբեյ, թանբիհ էրեց, թե. «Հար վաղ էդա գահ ընծիկ ձեռքըմ հըմալ հալավ կկարեք, օր մարդու վրա չէղնի»։

Տղեն իմալ օր էրեր էր ախչկա գլուխ, դու տես որ ախչիկն զէնդոր յոթ խաթն էնե տղի գլուխ։

Գիտցավ օր տղեն գացեր է, ուրեն հալավ կիտա կաբել, հ'ելավ զուր բոճին ճամբեց, ասեց.— Գնա, տես տղեն ի՞նչ կէնե։

Բոճին էկավ, ասեց.— Հանդ էր ֆլան դուքան, քզիկ հալավ կիտեր կաբել։

Բոճուն թանբիհ մը լե էրեր էր ախչիկ. «Իշքե տես թագավորի տղի վրեն ի՞նչ հալավ կա»։

Բոճին ասեց.— Կարմիր հալավ էր։

Ախչիկն հ'ելավ թագավորի տղի հագած հալավի պես ձեռքըմ հալավ հագավ ու գնաց թարղու դուքան, օր զինք չը ճանչնեն։ Ասեց.— Առեք զձըր փարեն, ղիմ հալվըներ դրեք մկրտի տակ, էրեք կտոր-կտոր, տվեք ընծիկ, առնեմ էրթամ։

Թարզիք ասին.— Հ'ո՞րի հըմալ կասիս, մեկ սահաթեն քու հալվներ կելնի, առ ու գնա։

Ախչիկն ասեց.— Իմ մալ չէ՞, ես իմալ կուզիմ, դուք հըմալ էրեք։

Թարզիք էրին կտոր-կտոր, ախչիկ թողեց գնաց։ Ախչիկն օր զուր օտք քաշեց, ըստ հաղ տղեն էկավ, ասեց.— Տվեք ղիմ հալվըներ, առնեմ էրթամ։

Թարզիքն ասին.— Ախբեր, քիչըմ հ'առաշ մենք լըմընալու վրա ենք, դու էկար ասիր՝ ղիմ մալ կտոր-կտոր էրեք, տվիր զմըր հախ, մենք էրինք թըռշա-թըռշա ու դու թողիր գացիր, հըմկա լե էկեր իս, կասիս՝ տվեք ղիմ հալվըներ, առնեմ, էրթա՞մ, օյ՞ին կէնիս զմզիկ, ի՞նչ է քո միտկ։

Թագավորի տղեն հասկցավ, օր ախչիկն է էնի, ձեն չհանեց, զուր յարեն քաշեց ներս։

Տղեն հալավ էլ չտվեց կաբել, հ'ելավ գնաց օսկերչնոց, օր ախչկան զուքս ու զինաթ իտա շինել։

Ախչիկ մեկ լե զբոճին ղրկեց, ասեց.— Գնա տես տղեն դո՞ր է, ի՞նչ կէնե, ի՞նչ հալավ կա վրեն ու էկո։

Բոճին գնաց, տեսավ օր կանուկ է օսկերչու դուքնի դուռ, վրեն լե սև հալավ էր հագուկ, դառցավ էկավ։ Ախչկան ասեց.— Հանդե ֆլան տեխ կանուկ, վրեն լե ձեռքըմ սև շոր կեր։

Ելավ ախչիկ, հագավ ձեռքըմ սև շոր ու քշեց օսկերչնոց, հար ինք գնաց, տղեն թանբիհ էրեր էր, թողի գացի։ Օր գնաց, տեսավ օսկերիչք առած են ուրանց ձեռք կշինեն։ Ասեց.— Ի՞նչ էրիք։

Օսկերիչք ասին.— Սահաթէ մը կելնի։

Ախչիկն ասեց.—Առեք զձրը փարեն, դրեք չաքուճի տակ, ջարդեք, էրեք ձիու ըռըշմա։

Դրին չաքուճի տակ, ջարդեցին, էրին փչուր-փչուր, ու ախչիկ թողեց էկավ։ Օր ախչիկ թողեց էկավ, թագավորի տղեն էկավ, ասեց.—Ի՞նչ էրիք, շուտ էրեք խըլըսեք, ես զիմ հարսնիք կրռնիմ։ Գացին առան զարծրթի փշրանք, բերին լցին հ'առեջ, ասին.—Դու իմա՞լ մարդ իս, սահաթու մը կիդաս կասիս՝ ջարդեք, էրեք ձիու ըռըշմա, սահաթու մը լե՝ շինեք, շուտ էրեք, ես զիմ հարսնիք կբռնեմ։

Մեկ լե ձեն չհանեց, գիտցավ, օր ախչկա բաներն է։ Ջուքս ու զինաթի թարկ լե տվեց։

Էկավ օր ալրի թատարուկ տեսնա, էրթա զհարսնիք բռնի։ Առավ տաս-քսան բեռ ցորեն ու գնաց ջաղաց, օր աղուն աղար։ Էն օր գնաց աղուն աղալու, ախչիկ մեկ լե զբոճին ճամբեց։ Ասեց.—Գնա տես թագավորի տղի վրեն ինչ հալավ կա, ի՞նչ կէնե ու չէնե, էկո։

Բոճին գնաց, տեսավ օր թագավորի տղեն ջաղացն է, աղուն կաղա, վրեն լե ձեռքըմ սիվտակ հալավ կա։ Դառցավ էկավ ասեց.—Հանդեր ջաղացն, հագեր էր ձեռքըմ սիվտակ հալավ, աղուն կազեր։

Ախչիկ հ'ելավ, հագավ ձեռքըմ սիվտակ հալավ ու քշեց ջաղաց։ Ասեց.—Ի՞նչ կէնեք։

Ջաղցպան ասեց.— Էրկու բեռ է մանցի, սահաթե մը կխըլըսի, էկո առ ու գնա։

Ախչիկն ասեց.— Խարուլ չըմ էնի, օր մանդր աղաք, հըմալ բետ կաղաք, օր հավեջ էղնի, էրկու կտոր էրեք, տվեք հ'իս, իմ մալ չէ՞։

Ջաղցպան էրեց խըռմա, թալեց էնդին։

Թագավորի տղեն էկավ ջաղցպանի խեչ, ասեց.— Ի՞նչ կէնիս, շուտ էրե, աղցի, ես զիմ հարսնիք կբռնիմ։

Ջաղցպան հերսոտավ, ասեց.—Դու իմա՞լ մարդ իս, օր սահաթուն խելկի մը կդառնաս, քիչ մը հ'առեջ էկար, ասիր՝ զիմ աղուն կէնիս քյափակ, կիտաս հ'իս, հմկա լե էկեր իս, կասիս՝ զիմ աղուն չատ մանդրը աղաս, իտաս, զիմ հարսնիք կէնիմ։

Տղեն հասկցավ, օր զէդ լե ախչիկն է էրի, հալվի ու զուքս ու զինաթի պես։ Թողեց էկավ ախչկա մոտ, ասեց.—Ախչի, դը զքու թատարուք տես, էրթանք։

Շունն էկավ ասեց ախչկան.— Սատաֆ խանում, օր դու զէդի էրիր թագավորի տղի գլուխ, հ'երգում է էրի, օր տանե խանչալըմ զարկե քզիկ, զքու արուն խմե։

Ախչիկ ասեց պապուն.— Աբո, ընծիկ չաքմաճե մը շինե, օր փակ ու բալնիքն ներսանց էղնի։

Հեր շինեց զախչկա ուզած սնդուկ։ Բերեց տվեց հ'ինք։

Ախչիկ բերեց լցեց տիկըմ գինի, կապեց վըր ուր սրտեն ու հագավ զուր հալվըներ, գնաց։

Տղեն առավ զախչիկն ու գնաց։ Գնաց բռնեց ղհարսնիք, յոթն օր, յոթ գիշեր զարկին ու խաղցան։ Բերին օր կմեկտեխեն։ Թագավորի տղի միտկ հ'ընկավ ախչկա էրածներն ու ասեց.—Սատաֆա խանում, ղհալվըներ հ'ո՞րի կըտրուտեցիր։

Ախչիկն չաքմաճի մեջեն, չունկլի հարսնից մոտեն օր խըլըսան, մտեր էր սնտուկ ու ներսևանց զդուռ փակեր էր, վերուց ասեց.—Աղեկ իմ էրի։

Մեկ լե վերցուց, տղեն ասեց.— Սատաֆա խանում, հ'որի՞ն դացիր օսկերչնոց, զուքս ու ղինաթներ տվիր ջարղել։

Սատաֆա խանումն ներսեն ասեց.— Աղեկ եմ էրի։

Էկավ վըր ջաղցին, տղեն ասեց.—Սատաֆա խանում, ջատ աղեկ հալվըներն ու զուքս ու արծաթն էրիր, զալուրն հ'ո՞րի տվիր քյափակ էնիլ։

Ախչիկն ասեց.— Ջէն լե աղեկ իմ էրի։

Ախչիկն օր ասեց՝ աղեկ եմ էրի, տղեն քաշեց զխանչալ, կանավ չաքմաճի վրեն, օր ախչիկն հ'ելնի դուրս, զարկե։ Ախչիկ զֆըռանկին բացեց, օր հ'ելներ դուրս։ Բանալու պես, թագավորի տղեն հայ, հայ ու զխանչալ իջուց ախչկա սիրտ։ Օր հ'իջուց, գինու տիկ պատռավ, տղեն գիտցավ, թե արուն է, զձեռք տվեց դեմ ու էրկու կուցք խմեց, ասեց. «Օխեշ, ըռհաթա»։ Օր խմեց, տեսավ արուն քաղցր է։ Տղեն ասեց.—Ախ, Սատաֆա խանում, ես չգիտցա քու արուն հըմլա քաղցր էր, օր քու արուն հըմլա քաղցր է, ըպա դու ինչ խտար քաղցր ես, ես իմալ քոռցուցի զիմ աչկ։

Հըտ ասելու պես ախչիկ սնդրկի մեջեն թռավ, հ'ելավ, թիկ կանավ տղի հ'առեջ ու գրկեցին զիրար պառկան, առ ջաֆթալի, վըր շաֆթալի։

Աստծուց հ'իջավ իրեկ խնձոր, մեկ ասողին, մեկ՝ լսողին, մեկ՝ անկաճ էնողին։